

ՆՈՐԻՆ Ս. ՕՇՈՒՐՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿԱՐՈՂԻԿՈՍԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Քրիստոնեությունը ո՛չ միայն բնորոշում է հայրենասիրության գաղափարը, այլև շատ բարձր է գնահատում սերը դեպի հայրենիք...»:

(Վեհափառ Հայրապետի «Քրիստոնեություն և Հայրենիք» բեմայով Բարդիգ՝ խոսված 1925 թ. փետր. 15-ին Քրիլիսիի Քամոյան եկեղեցում):

«Սիրո և գուրգուրանքի, ակնածանքի և հիացմունքի սրբություն սրբոցն է հանդիսանալու մեր ազգային-հայրենական պետությունը՝ Սովետական փառապանծ Հայաստանը: Սովետական Մեծ Միության պաշտպանության ապավինած, ռուս ազնիվ ու քաջարի ազգի ամենօրյա օգնությունը վայելելով, սովետական բոլոր ժողովուրդների անշահախնդիր աջակցությանն արժանացած, սովետական հիստանդ մեծ բնույթի էրաբայակցության կենսատու և փրկարար շունչը շնչելով, Քնաշխարհի հայությունը իր ազգային պետության հիմքերն է կերտում ու ամրապնդում և հրաշագործում ու պայծառագործում հայրենական սուրբ օջախը, որի լույսի և ջերմության ուժով աշուստ սերունդը անօրինակ բափով ու հանճարով դարբնում է ո՛չ միայն իր, այլև գաղոց սերնդների երջանկությունը»:

(Վեհափառ Հայրապետի 1948 թ. ամառուի առթիվ գրած կոնդակից):

«Ինչպես արևի կենսատու ճառագայթների ազդեցության շնորհիվ գլխաբանում ու կենդանանում է քառամած ծաղիկը, այնպես էլ մեր Մայր Հայաստանը ռուս մեծ ժողովրդի աջակցության շնորհիվ աղփատության հիրաններից և ավերակների ծոցից ելնելով, վերակենդանացավ և դարձավ զորավոր ու հարուստ երկիր: Հայ քաղաքացիական ժողովուրդը այդ տարիների ընթացքում ստեղծեց նյութական ու կուլտուրական շատ արժեքներ...»

ՀԱՅԸ, ԲԱՑԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ, ՉՈՐՆԻ ԱՅԼ ՀԱՅՐԵՆԻՔ: Հայր Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կովան, բայց եթե Մայր Հայրենիք, Հայ եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը՝ Ս. Էջմիածնի Հայրապետական Արքեպիսկոպոսը:

(Վեհափառ Հայրապետի (այն ժամանակ՝ կաթողիկոսական տեղապահ) 1941 թվի հուլիսի 30-ի կոնդակից):